

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

### Հոդված 1.

1. Օրենսգրքի 157<sup>6</sup> հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**<Հոդված 157<sup>6</sup>. Շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) աշխատանքների համար ակնհայտ ոչ իրավաչափ թույլտվություններ տրամադրելը կամ շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տրամադրելու սահմանված կարգը խախտելը**

Շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) աշխատանքների համար ակնհայտ ոչ իրավաչափ թույլտվություններ տրամադրելը կամ շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններ տրամադրելու սահմանված կարգը խախտելը պաշտոնատար անձի նկատմամբ առաջացնում է.

- տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով,
- պարտավորություն՝ օրենքի խախտմամբ տրամադրված շինարարության (տեղադրման) և քանդման (ապամոնտաժման) թույլտվություններն անվավեր և առոչինչ ճանաչելու վերաբերյալ,
- պարտավորություն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վարչարարությամբ պատճառված վնասի գույքային կամ դրամական հատուցում վարչական ակտի հասցեատիրոջը՝ հատուցման մասին պահանջը ստանալուց հետո 3 տարվա ընթացքում՝ ամենամսյա վճարումների տեսքով և սահմանված ժամանակացույցի համաձայն:>:

**Հոդված 2.** Սույն օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: